

մեր ֆակատագրին: 1915ը յստակ չէր անշուշտ իմ մտքին: Բայց աղետ մը կը յօրհնուէր: Մաթիկ Մելիքիսանեանը կը լրացնէր, իբր հեռու հայրենիքին կենդանի պատկերը, պատանութեան խակ շրջանը, զիս դարձնելով իմ ժողովուրդիս իմաստին, շատ աւելի պարզ, մարդկային ֆամբով մը, որքան չէին կրցած ընել ատիկա Արմաշի վանքի հարիւրաւոր տետրակները:

Կու տամ Մաթիկ Մելիքիսանեանը: Կենդանագիրը կազմուած է անձնական ամբողջ ու հարազատ տարրերէ: Ապրեցայ հետը երկու շաբաթ, զիջո՛ւմ՝ գոր չէր ըրած ուրիշ ոչ մէկ տեղ: Մարդն էր, որ կ'երեւար: Կենալը, գործելը, աշխատիլը՝ ուրիշներուն փառասիրութիւնը: Իրը՝ տեսնել, ֆանչնալ, սորվիլ մեր ժողովուրդը: Մանուկ մըն էր, հակառակ մեծ գարգացումին: Մնացած էր հայ, Մոսկուայէն մինչեւ իմ գեղը: Գիտէր վտանգը, որ կախ էր գլխուն ու յուսահատ բան էր ատիկա արգիլել չկրնալը:

Ինչ որ կը պատկանի պատմական հարազատութեան իր ու ընկերոջը անհաւատալի ողիսականէն, այսօր չեմ ենթարկեր մանրակրկիտ հետազօտութեան: Մեր յեղափոխականներէն շատեր պատմած են իրենց յիշատակները: Այդ էջերէն յառնող ընդհանուր տպաւորութիւնը շատ մօտիկն է անոր, գոր ես առի Մաթիկ Մելիքիսանեանէն: Ու այդ մարդերը մէկ չէ, տասը չէ, հարիւր չէ, այլ՝ հազարներ էին, որոնք Կովկասէն ժամանած կամ ոչ՝ Ելան մեր իսկ հողերուն ընդերքէն ու պտտեցան մեր լեռներն ու անդունդները ու պսակուեցան «երկնային պսակով», ինչպէս կը պատկերեն մեր գիրքերը: Այսօր չեմ հարցնէր ինծի անոնց ցեղաբանութիւնը: Մաթիկ Մելիքիսանեան ու ընկերը մեռան բանտին մէջ: («Մնացորդաց») ի Բ. հատորը՝ «Արիւնի ճամբով», կու տայ այդ նահատակութիւնը լրիւ): Թուրքերը արդարութեան ծարաւն ունին, արեան ծարաւին չափ գօրաւոր: Ընթերցողը կը դրկեմ «Արիւնի ճամբով»ին:

Այսօր, մղձաւանջէն հեռու, յիսունէն շատ վեր, երբ ազատ երկրի մը մէջ կը մօտենամ այդ մարդուն, այդ օրերուն ու մասամբ այդ պատանիին ու յարակից աշխարհ-